ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀՐԱՎԵՐ

Հայաստանի Հանրապետություն
«Էլեկտրոնային հասարակության եւ մրցունակության համար նորարարության ծրագիր»
Վարկ No: 7963-AM

Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի /ԳՏԿ/ եւ Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի /ՎՏԿ/ համար ինժեներական սարքավորումների մատակարարում
Փաթեթ թիվ ICB No: EIC-2.5.1-G-3a/Լոտ 1,2,3

1. Հայտերի ներկայացման սույն հրավերը ներկայացվում է ի լրումն սույն ծրագրի Գնումների գլխավոր ծանուցմանը (ԳԳԾ), որը UNDB online ինտերնետային կայքում զետեղվել է **2010թ-ի հոկտեմբերի 13-ին**:

2. Հայաստանի Հանրապետությունը «Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկից» (ՎԶՄԲ) վարկ է ստացել՝ «Էլեկտրոնային հասարակության եւ մրցունակության համար նորարարության ծրագրի» ծախսերի ֆինանսավորման համար, եւ վերջինս նպատակ ունի է այս վարկի միջոցների մի մասն օգտագործել **Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի /ԳՏԿ/ եւ Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի /ՎՏԿ/ համար ինժեներական սարքավորումների մատակարարման** թիվ **ICB No: EIC-2.5.1-G-3a/Լոտ 1,2,3**-ի Հայտերի ներկայացման հրավերի համատեքստում՝ համաձայնագրի շրջանակներում վճարումների կատարման համար:

3. «Ձեռնարկությունների Ինկուբատոր Հիմնադրամը» /ՁԻՀ/ եւ ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» ՊՀ-ն /ԱՖԾԿԿ/ այժմ հրավիրում են պահանջներին համապատասխանող հայտատուներին ներկայացնել կնքված հայտեր **Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի /ԳՏԿ/ եւ Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի /ՎՏԿ/ համար ինժեներական սարքավորումների մատակարարման** թիվ **ICB No: EIC-2.5.1-G-3a/Լոտ 1,2,3**-ի նպատակով:

4. Մրցույթը կանցկացվի 2004թ-ի մայիսին հրապարակված եւ 2006թ-ի հոկտեմբերին եւ 2010թ-ի մայիսին վերանայված «ՎԶՄԲ փոխառությունների եւ ՄԶԸ վարկերի շրջանակներում գնումների համար» ՀԲ ուղեցույցներով սահմանված Միջազգային մրցակցային մրցույթի (ՄՄՄ) ընթացակարգերի համաձայն: Հայտ կարող են ներկայացնել Ուղեցույցների շրջանակներում սահմանված թույլատրելի երկրներից բոլոր հայտատուները:

5. Հետաքրքրված համապատասխանող Հայտատուները կարող են հետագա տեղեկություններ ձեռք բերել ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» ՊՀ-ից եւ ուսումնասիրել մրցութային փաստաթղթերը ստորեւ նշված հասցեում տեղական ժամանակով 9:00-ից մինչեւ 18:00:

6. Որակավորման պահանջները ներառում են.

(ա) Ֆինանսական կարողություններ.

Հայտատուն պետք է ներկայացնի փաստաթղթային հավաստում առ այն, որ վերջինս բավարարում է հետեւյալ ֆինանսական պահանջներին՝

- Վերջին երեք տարիների /2012-2014թթ/ նվազագույն միջին տարեկան շրջանառությունը պետք է կազմի 500,000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար Լոտ 1-ի համար, 200,000 ԱՄՆ, դոլարին համարժեք գումար Լոտ 2-ի համար և 160,000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար Լոտ 3-ի համար: Լոտերի որեւէ համակցության դեպքում պետք է հավասար լինի համակցության մեջ մտնող լոտերի վերջին երեք տարիների նվազագույն միջին տարեկան շրջանառությունների ընդհանուր գումարին:
- Հայտատուն պետք է ներկայացնի վերջին երեք տարիների /2012-2014թթ/ համար հաշվետվություններ ֆինանսական վիճակի վերաբերյալ, ինչպիսիք են շահութահարկի կամ ԱԱՀ-ի հաշվարկի հաշվետվությունները:

(բ) Փորձ եւ տեխնիկական կարողություն.

Հայտատուն պետք է փաստաթղթային փաստարկ ներկայացնի՝ ցույց տալու համար, որ վերջինս համապատասխանում է փորձառության հետեւյալ պահանջին/ներին՝

- Նմանատիպ ապրանքների մատակարարման եւ/կամ արտադրման նվազագույնը 3 տարվա փորձ:
- Վերջին 3 տարիների ընթացքում առնվազն մեկ նմանատիպ ապրանքների մատակարարման հայտի արժեքից ոչ պակաս գումարի պայմանագրի հաջողությամբ իրականացում՝ ներկայացնելով պայմանագրի եւ մատակարարված ապրանքների Ընդունման ակտի պատճենները: Լոտերի որեւէ համակցության դեպքում պետք է ունենա առնվազն մեկ նմանատիպ ապրանքների մատակարարման համակցության մեջ մտնող լոտերի հայտերի արժեքների գումարից ոչ պակաս գումարի պայմանագրի հաջողությամբ իրականացում:
- Օտարերկրյա Մասնակցին, որը գործունեություն չի ծավալում Գնորդի երկրում, պայմանագիրը շնորհելու դեպքում նրան այդ երկրում պետք է ներկայացնի իր Գործակալը, որը իրազոր կլինի մատակարարումից հետո իրականացնել Մատակարարի երաշխիքային սպասարկման պարտավորությունները:

Համատեղ ձեռնարկությամբ հանդես գալու դեպքում, ՀՁ-ի յուրաքանչյուր գործընկերը պետք է բավարարի Ֆինանսական կարողությունների, փորձառության եւ տեխնիկական կարողությունների պահանջներին:

(գ) Հայտատուն պետք է փաստաթղթային փաստարկ ներկայացնի՝ ցույց տալու համար, որ վերջինիս առաջարկած ապրանքները բավարարում են հետեւյալ պահանջին՝

Սույն Պայմանագրի շրջանակում մատակարարվող ապրանքները պետք է ունենան ISO 9001:2008 կամ համարժեք սերտիֆիկատ, բացառությամբ Մրցութային փաթեթի Բաժին VI-ի «Տեխնիկական մասնագրերի» 3,7,10,12 և 13 կետերում բերված սարքավորումների:

Տեղական շուկայում արտադրվող որոշակի ապրանքների նկատմամբ գնային արտոնության գործակից չի կիրառվելու:
Լրացուցիչ մանրամասները ներկայացված են մրցութային փաթեթում:

7. Հետաքրքրված հայտատուները կարող են ձեռք բերել *անգլերեն* լեզվով մրցութային փաստաթղթերի ամբողջական փաթեթը ստորեւ ներկայացվող հասցեով գրավոր դիմում ներկայացնելով եւ 50 ԱՄՆ դոլար օտարերկրյա մասնակիցների դեպքում և 20,000 ՀՀ դրամ տեղական մասնակիցների դեպքում չփոխհատուցվող գումար վճարելով: Վճարման մեթոդը կլինի նշված գումարի փոխանցումը ԱՖԾԿԿ-ի՝ ստորեւ ներկայացվող հաշվեհամարին: Մրցութային փաստաթղթերի տպագիր տարբերակը կփոխանցվի Հայտատուի ներկայացուցչին: Հայտատուների հարմարության համար, վերջիններիս խնդրանքով Մրցութային փաստաթղթերի ոչ պաշտոնական

էլեկտրոնային տարբերակը կուղարկվի էլ. փոստով: Տպագիր եւ էլեկտրոնային տարբերակների միջև անհամապատասխանության դեպքում կգերակայի տպագիր տարբերակը:

Հաշվեհամարի մանրամասներն են՝

Արտասահմանից վճարման համար.
Միջնորդ բանկ՝ **JPMorgan Chase Bank, N.A., New York, NY USA**
SWIFT BIC: **CHAS US 33**
Հաշիվ՝ **001 1 010782**
Ստացողի բանկ՝ **ՀՀ Կենտրոնական բանկ, Երեւան, ՀՀ**
SWIFT BIC: **CBRA AM 22**
Ստացող՝ **ՀՀ Ֆինանսների նախարարության ԱՖԾԿԿ ՊՀ**
Հաշիվ՝ **900000900564**

Տեղական վճարումների համար.
Ստացող՝ **ՀՀ Ֆինանսների նախարարության ԱՖԾԿԿ ՊՀ**
ՀՎՀՀ՝**180255188**
Ստացողի բանկը՝ **ՀՀ Ֆինանսների Նախարարության Կենտրոնական գանձապետարան**
Հաշիվ: **900000900564 (ՀՀ դրամ)**

8. Հայտերը պետք է ներկայացվեն ստորեւ նշված հասցեով, **մինչեւ 2016թ. փետրվարի 25-ը, ժ. 15:00** (տեղական ժամանակ): Հայտերը չի թույլատրվում ներկայացնել էլեկտրոնային տարբերակով: Ուշացված հայտերը կմերժվեն: Հայտերը կբացվեն հայտատուի ներկայացուցիչների ներկայությամբ՝ **2016թ. փետրվարի 25-ին ժ.15:00** (տեղական ժամանակ): Բոլոր հայտերը պետք է ապահովված լինեն ***հայտի երաշխիքով:*** Հայտի երաշխիքի գումարը պետք է կազմի **Լոտ 1-ի համար 9,400 ԱՄՆ դոլար, Լոտ 2-ի համար 3,700 ԱՄՆ դոլարի և Լոտ 3-ի համար 3,300 ԱՄՆ դոլար** կամ դրան համարժեք ազատ փոխարկելի այլ արժույթով գումար: Երկու կամ ավել լոտերի դիմելու դեպքում Հայտի երաշխիքը պետք է ներկայացվի յուրաքանչյուր լոտի համար առանձին, քանի որ գնահատումը կատարվելու է ըստ լոտերի համաձայն փաթեթի Մրցութային Տվյալների «Ցուցումներ Հայտատուներին» բաժնի 36.3 (a) կետի:

9. Վերոշարադրյալ հղում կատարված հասցեն հետեւյալն է՝

պրն. Էդգար Ավետյան
Գործադիր տնօրեն
ՀՀ ֆիանանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» ՊՀ /ԱՖԾԿԿ/
ՀՀ ֆինանսների նախարարություն
3-րդ հարկ, Տիգրան Մեծի 4,
Երեւան 0010, Հայաստանի Հանրապետություն
Հեռ՝ (+374-11) 910 581, 910 590
Ֆաքս՝ (+374-10) 545 708
Էլ. փոստ՝info@ffpmc.am